Արձանագրություն N 2.1

ՀՀՔԿ-ԳՀԽԾՁԲ-22/9 ծածկագրով ՀՀ Լոռու մարզի Ստեփանավան համայնքի Աշոտաբերդ թաղամասի կառուցապատման նախագծանախահաշվային փաստաթղթերի մշակման խորհրդատվական ծառայության ձեռքբերման գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի նիստի

ք.Երևան

21.03.2022թ.

ժամը 16:00

Մասնակցում էին՝

Հանձնաժողովի նախագահ՝ Ռ. Ադամյան

Հանձնաժողովի անդամներ՝ Գ. Ծատուրյան

Ա. Մամիկոնյան

Վ. Առաքելյան

Ս. Թորոսյան

Հանձնաժողովի քարտուղար՝ Ն. Հարությունյան

Բացակայում էր՝

Հանձնաժողովի անդամ՝ Ն. Բարսեղյան

1. Գնման ընթացակարգի շրջանակներում ներկայացված հարցման և պարզաբանման մասին

(Ռ. Ադամյան)

1.1 ՀՀ քաղաքաշինության կոմիտեի կարիքների համար՝ ՀՀՔԿ-ԳՀԽԾՁԲ-22/9 ծածկագրով ՀՀ Լոռու մարզի Ստեփանավան համայնքի Աշոտաբերդ թաղամասի կառուցապատման նախագծանախահաշվային փաստաթղթերի մշակման խորհրդատվական ծառայության ձեռքբերման գնման ընթացակարգի վերաբերյալ 2022 թվականի մարտի 18-ին ստացվել է հարցադրում:

1.2 Հիմք ընդունելով <<Գնումների մասին>> ՀՀ օրենքի 29-րդ հոդվածի պահանջները՝ գնահատող հանձնաժողովը հաստատում է տրամադրվելիք պարզաբանման հայտարարությունը (կցվում է):

Ընդունվել է որոշում՝ կողմ –5, դեմ – 0

Հանձնաժողովի

Նախագահ՝ _____ Ռ. Ադամյան

Անդամ՝ _____ Գ. Ծատուրյան

_____ Ա. Մամիկոնյան

_____ Վ. Առաքելյան

_____ Ս. Թորոսյան

Արձանագրությունը կազմեց
հանձնաժողովի քարտուղար՝ _____ Ն. Հարությունյան

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
հրավերի պարզաբանման մասին

Հայտարարության սույն տեքստը հաստատված է գնահատող հանձնաժողովի

2022 թվականի մարտի 21-ի թիվ 2.1 որոշմամբ և հրապարակվում է

<<Գնումների մասին>> ՀՀ օրենքի 29-րդ հոդվածի համաձայն

Ընթացակարգի ծածկագիրը N ՀՀՔԿ-ԳՀԽԾՁԲ-22/9

18.03.2022թ. ստացված հարցադրումը և դրա վերաբերյալ պարզաբանումը

Հարցում

Տեխնիկական բնութագրի ՆՆՓ-ի կազմում ներառված է <<Տարածքում գոյություն ունեցող և շահագործման համար ոչ պիտանի շենք-շինությունների քանդման, նոր շենքերի ու շինությունների կառուցման և բնակավայրի կառուցապատման աշխատանքների նախագծային փաստաթղթեր՝ տեխնիկական պայմանների, ինժեներաերկրաբանական հետազննությունների, տեխնիկական վիճակի ուսումնասիրության եզրակացությունների հիմքով>>:

Ո՞ւմ կողմից են իրականացվելու տեխնիկական պայմանների, ինժեներաերկրաբանական հետազննությունների, տեխնիկական վիճակի ուսումնասիրության աշխատանքները և տրամադրվելու եզրակացությունները:

Պարզաբանում

1. Տեխնիկական պայմանները տրամադրվում են համայնքի ղեկավարի կողմից՝ ճարտարապետահատակագծային առաջադրանքին կից, մատակարար կազմակերպությունների տրամադրած տվյալների համաձայն (ՀՀ կառավարության 19.03.2015թ N596-Ն որոշում):
2. Ինժեներաերկրաբանական հետազննության և տեխնիկական վիճակի ուսումնասիրության եզրակացությունները պետք է ձեռք բերվեն նախագծողի կողմից, հատկացվող (նախատեսվող) ֆինանսական միջոցների շրջանակներում:
3. Տեխնիկական բնութագրի <<Այլ պահանջներ>> բաժնում հստակ նշված է, թե ում են վերապահվել այդ գործառույթները:

Սույն հայտարարության հետ կապված լրացուցիչ տեղեկություններ ստանալու համար կարող եք դիմել ՀՀՔԿ-ԳՀԽԾՁԲ-22/9 ծածկագրով գնահատող հանձնաժողովի քարտուղար՝ Նազիկ Հարությունյանին:

Հեռախոս՝ 011621821
էլ.փոստ՝ tender1@minurban.am

ՀՀՔԿ-ԳՀԽԾՁԲ-22/9 ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողով